

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /գրադմուևքի/ անվանումը	5-15.20.01 «Կոշիկի արտադրության տեխնոլոգիա» մասնագիտության՝ Չայաստանի Չանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 3-րդ մակարդակի 5-15.20.01.02-3 «Կոշկակար» որակավորման
I. Դերը՝	Կոշկակարն իրականացնում է տարբեր նշանակության կոշիկների պատրաստման և վերանորոգման աշխատանքներ
II. Խնդիրների բնագավառները	
Խնդիրների բնագավառ 1. Նախապատրաստական աշխատանքների կատարում	
Աշխատանքային գործընթացը	1) հիմնական և օժանդակ նյութերի, գործիքների և սարքավորումների նախապատրաստում, 2) արտադրական տարածքի /աշխատավայրի/ նախապատրաստում մաքրության, անվտանգության և այլ կանոնների համաձայն:
Կատարման չափանիշներ	1) առկա են անհրաժեշտ նյութերը, գործիքները և սարքավորումները, աշխատում են անխափան, 2) նախապատրաստված են աշխատավայրը և աշխատեղը, ապահովված են աշխատանքի անվտանգության, սանիտարահիգիենիկ, հակահրդեհային և այլ պայմանները:
Խնդիրների բնագավառ 2. Կոշիկի պատվերի ընդունում	
Աշխատանքային գործընթացը	1) պատվերի մոդելի համատեղ քննարկում, նպատակի բացահայտում, 2) երեսացուի և տակացուի տեսակի, գույնի և լրացուցիչ պարագաների (фурнитурa) համատեղ ընտրություն, 3) կոշիկի կաղապարի ընտրություն, 4) կոշիկի Եսքիզի մշակում՝ ըստ անհատական պատվերի կամ բազային մոդելի հիման վրա, 5) պատվերի չափսերի ամրագրում, 6) պատվիրատուի պատվերի ձևակերպում (անհատական պատվերի դեպքում՝ արժեքի և ժամկետի որոշում):
Կատարման չափանիշներ	1) առկա է կոշիկի մոդելը համապատասխան տեխնիկական բնութագրով՝ համաձայնեցված պատվիրատուի հետ, 2) ձևակերպված է կոշիկի պատրաստման պատվերը (արժեքը և ժամկետը)՝ համաձայնեցված պատվիրատուի հետ, 3) պատվերը ձևակերպված է իրավական ուժ ունեցող փաստաթղթով:
Խնդիրների բնագավառ 3. Կոշիկի արտադրման տեխնոլոգիական գործընթացների կատարում	
Աշխատանքային գործընթացը	1) կոշիկի բաղադրիչների նախապատրաստում (ձևվածքի, երեսացուի, տակացուի, այլ օժանդակ մասերի), 2) կոշիկի պատրաստման տեխնոլոգիական գործընթացների կատարում՝ վերնամասի կարում և տակացուի ամրացում, 3) անհատական պատվերի դեպքում՝ կոշիկի չափսափորձում և հարմարեցում, 4) անհրաժեշտության դեպքում պատրաստի արտադրանքի թերությունների վերացում:
Կատարման չափանիշներ	1) կոշիկը արտադրված է՝ ըստ պատվերի, 2) արտադրանքը պատրաստ է փաթեթավորման, պահեստավորման և առաքման, 3) վերացված են պատրաստի արտադրանքի թերությունները:
Խնդիրների բնագավառ 4. Կոշիկի նորոգման աշխատանքների կատարում	

Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1) կոշիկի վնասվածության աստիճանի սահմանում, եզրահանգում և համաձայնեցում պատվիրատուի հետ, 2) տարատեսակ կյուլթերից պատրաստված կոշիկների նորոգում և հանձնում պատվիրատուին:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) որոշված է կոշիկի վնասվածության աստիճանը, 2) որոշված է տվյալ կոշիկի առանձին մասերի նորոգման եղանակը և անհրաժեշտ կյուլթերը, 3) համաձայնեցված է կատարման ժամկետը և արժեքը, 4) նորոգված կոշիկը հանձնված է պատվիրատուին:
Խնդիրների բնագավառ 5. Սարքավորումների շահագործում և անվտանգության տեխնիկայի կանոնների ապահովում	
Աշխատանքային գործընթացը	<ol style="list-style-type: none"> 1) սարքավորումների անվտանգ օգտագործում և կարգավորում, 2) արտադրական տարածքում աշխատանքի անվտանգության, շրջակա միջավայրի պահպանության և հակահրդեհային անվտանգության կանոնների պահպանում:
Կատարման չափանիշներ	<ol style="list-style-type: none"> 1) պահպանված են սարքավորումների անվտանգ շահագործման կանոնները, 2) պահպանված են աշխատանքի անվտանգության կանոնները:
III. Պատասխանատվությունը Լրացնել՝	
IV. Լեզուները	<ul style="list-style-type: none"> ▪ Հայերեն՝ լավ ▪ Օտար լեզվի մասնակի իմացություն, շփվելու և մասնագիտական գրականությունից օգտվելու համար:
V. Համակարգիչը	Կոշկակարությանը վերաբերող ծրագրերով աշխատելու համար
VI. Գիտելիքները	<p>Պետք է իմանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) կոշկեղենի զարգացման պատմությունը, մոդայի ուղղությունը, կոշիկի արտադրման ժամանակակից գործընթացը, 2) ոտնաթափ անատոմիան և ֆիզիոլոգիան, 3) կոշիկի դասակարգումը (ըստ նշանակության, տեսակի, սեռատարիքային, ամրացման եղանակի և երեսացու ու տակացու կյուլթերի), 4) ոտնաթափ չափման մեթոդները (եղանակները), 5) ոտնաթափ շարժման ընթացքը (կանգնած, քայլելիս և վազելիս), 6) կաղապարների տեսակները (հիմնական և օժանդակ), 7) կաղապարների արտադրությունը (փայտից և պլաստմասսայից), 8) կոշիկի երեսացու և տակացու մասերի նախագծման հիմունքները, 9) կոշիկի արտադրության մեջ օգտագործվող հիմնական կյուլթերը (բնական կաշի, արհեստական կաշի, գործվածքներ և այլն), դրանց օգտագործման բնագավառները, 10) կոշիկի արդյունաբերության մեջ օգտագործվող սոսինձները, ներկերը ապրետուրաները և ֆուրնիտուրաները, 11) կոշիկի առանձին մասերի մշակման տեխնոլոգիան, 12) տարբեր կյուլթերից պատրաստված վնասված կոշիկների նորոգման ձևերը և վերականգնման եղանակները, հիմնական հանգույցների միացման տեխնոլոգիական հաջորդականությունը, 13) կոշիկի պատրաստման կամ արտադրության համար օգտագործվող գործիքները, սարքավորումները, 14) սարքավորումների անսարքությունների տեսակները և դրանց աննշան անսարքությունների վերացման ձևերը, 15) անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում, 16) արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները :
VII. Կարողությունները և հմտությունները	<p>Պետք է կարողանա.</p> <ol style="list-style-type: none"> 1) տիրապետել աշխատանքի տեղավորման կարողություններին, աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել

	<p>թիմում,</p> <p>2) մեկնաբանել սխեմաներ, էսքիզներ, աղյուսակներ, նկարներ,</p> <p>3) պատվիրատուին սխեմայով ծանոթացնել մարդու ոտնաթաթի առանձնահատկություններին, վերցնել չափսերը, ընդունել պատվերը,</p> <p>4) անհատական պատվերի դեպքում կատարել ընտրված մոդելի երեսացու, տակացու, աստառացու և միջնաստառացու մասերի ձևում,</p> <p>5) կատարել մասերի մակերեսների չափում, ստուգել ձևված և կտրված մասերի որակը,</p> <p>6) կատարել դետալների (մասերի) տեղադրում (ՄԿ) և մեկ զույգի կյութածախսի (ՔԵ) որոշում, առավելագույնս արդյունավետ օգտագործելով կյութերը,</p> <p>7) նորաձևության և ըստ անհատական պատվերի ընտրել կադապարը,</p> <p>8) կատարել մոդելի երեսացու և տակացու մասերի մշակում ձեռքով կամ մեքենայով,</p> <p>9) կարել նախապատրաստվածքը (заготовка). ա) միացնել հետևամասերը, բ) կարել միացնող մասը,</p> <p>10) նախապատրաստվածքը բերել վերջնական տեսքի (ֆուրնիտուրաների և քուղերի ամրացում),</p> <p>11) ստուգել նախապատրաստվածքի որակը,</p> <p>12) կատարել նախապատրաստվածքի նախապատրաստումը ձևավորմանը (եզրերի սոսնձապատում և միջին դետալների տեղադրում),</p> <p>13) կատարել կոշտ միջնատակի ամրացում, հետքի նախապատրաստում վրաքաշման և շրջաքաշման,</p> <p>14) կատարել կոշիկի վերնամասի ձևավորում (ձեռքով կամ մեքենայով),</p> <p>15) կատարել շրջաքաշված կոշիկի չորացում, հետքի նախապատրաստում տակացուի ամրացման համար,</p> <p>16) կատարել ներբանի և կրունկի ամրացում (տարբեր մեթոդներով),</p> <p>17) կատարել կոշիկի երեսացու և տակացու մասերի հարդարում,</p> <p>18) կատարել պատվերի որակի վերջնական ստուգում,</p> <p>19) կատարել անհատապես պատրաստված կոշիկի չափափորձում, թերությունների շտկում, վերջնամշակում,</p> <p>20) կատարել տարբեր կյութերից, տարբեր ձևերով ամրացված կոշիկների, երեսամասերի և տակացուների նորոգում:</p>
<p>VIII. Անձնային հատկանիշները</p>	<p>Տարածական պատկերացում ունեցող, գեղագիտական ճաշակ ունեցող, ուշադիր, պատասխանատու, մարդամոտ, շփվող, ստեղծագործական մտածողությամբ</p>